**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ**
**ՂԵԿԱՎԱՐ**

№ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _

«_____»_____20 թ.

**ՀՀ քաղաքացի Մուշեղ Հովսեփյանին**

Հարգելի պարոն Հովսեփյան

Ի պատասխան Ձեր կողմից 03.12.2020թ. ուղարկված գրության՝ տեղեկացնում եմ, որ Գեղարքունիքի մարզպետարանը Գավառի «Լևոն Քալանթարի անվան» դրամատիկական թատրոնի տնօրինության հետ նախկինում համաձայնության է եկել, որ 2020 թվականին խնայողությունների միջոցով կապահովվի թատրոնի շենքում հաշմանդամ և սակավաշարժ խմբերի տեղաշարժի մատչելիությունը, սակայն պայմանավորված ՀՀ-ում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման և ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության հետ, դրամատիկական թատրոնը չի գործել, ուստի ֆինանսական միջոցների բացակայության պատճառով աշխատանքներ չեն իրականացվել:

Նշված աշխատանքները կիրականացվեն 2021 թվականին:

0054, Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ., Ա. Միկոյան 109/8, էլ. փոստ՝

Հարցման 4-րդ կետի առնչությամբ տեղեկացնում եմ, որ ՔՏՀԱ տեսչական մարմնի կողմից 2020 թվականին հայտնաբերվել է մատչելիության նորմերի խախտման թվով 5 դեպք:

Վերը թվարկված բոլոր դեպքերում ՔՏՀԱ տեսչական մարմնի շահագործման ընդունող հանձնաժողովի անդամի կողմից մերժվել է շինարարության ավարտական ակտի տրամադրման գործընթացը: Կառուցապատողին տրվել ցուցում՝ խնդիրը շտկելու ուղղությամբ, որից հետո նոր տրամադրվել է համապատասխան շահագործման թույտվություն:

***Ձեզ եմ ներկայացնում փվյալ շինությունների հասցեները՝***

ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փողոց, թիվ 44 հասցե:
ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Մարքսի փողոց, թիվ 21 շենք, բն.3,4 հասցե:
ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23փ., թիվ 43/3 հասցե:
ՀՀ Արարատի մարզ, ք.Մասիս, Հերացու փողոց, թիվ 26/11 հասցե:
ՀՀ Արարատի մարզ Ավշար համայնք, Թ.Գրիգորյան 2/1 հասցե:

*Հարգանքով՝* **ԳԵՂԱՄ ՇԱԽԲԱԶՅԱՆ**

X _____

Կատարող՝ Ե. Զոհրաբյան
Հեռ.: (+374 60) 86 66 69